ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
13 դեկտեմբերի 2018 թվականի N 305-Ա

«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ, ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 112-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և 19-րդ հոդվածով՝

կ ա ր գ ա դ ր ում ե մ.

1. 2018թ. դեկտեմբերի 14-ից լուծել «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անուշ Ներսիսյանի հետ 2017 թվականի փետրվարի 3-ին կնքված N 22 աշխատանքային պայմանագիրը և սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Հիմք՝ Ա. Ներսիսյանի անձնական դիմումը:

2. Անիկ Գրիգորյանին 2018թ. դեկտեմբերի 14-ից նշանակել «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը՝ ազատելով նրան «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականություններից:

Հիմք՝ Ա. Գրիգորյանի անձնական դիմումը:

3. Ընկերությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Համբարձումյան Հերմինե	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Թադևոսյան Արմեն	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Գրիգորյան Տիգրան	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական *բաժնի առաջատար մասնագետ*

Ներսիսյան Անուշ	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նախկին տնօրեն, հանձնող
Գրիգորյան Անիկ	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13.12.2018

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: РОССИЙСКИЙ ГУМАНИТАРНЫЙ ФОНД 2005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ. դեկտմբերի 13
ք. Կապան